ԿԱՐԾԻՔ

Լուսինե Ասատուրի Տանաջյանի «Սոցիալական փոփոխությունները հայկական սփյուռքում» (Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայերի էթնոսոցիոլոգիական հետազոտություն), Է.00.04. «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Լուսինե Տանաջյանի պաշտպանության ներկայացրած ատենախոսական աշխատանքը նվիրված է հայկական սփյուռքի երեք քաղաքային համայնքներում ընթացող սոցիալական փոփոխությունների ուսումնասիրությանը: Թեման շատ արդիական է ու հույժ կարևոր. այն որոշակի պարզաբանումներ է տալիս հայկական համայնքների հնաբնակ և վերջին տասնամյակներում Հայաստանից և այլ երկրներից մեկնած ու սփյուռքը համալրած հայերի հարմարվողականության և սոցիալական փոփոխությունների առանձնահատկությունների ու օրինաչափությունների մասին: Սփյուռքի հայ համայնքների վերաբերյալ բազմաթիվ աշխատանքներ են հրատարակվել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում, որոնք հիմնականում վերաբերում են ձևավորման պատմությանը, տեղաբաշխման խնդիրներին, հասարակական ու քաղաքական կազմակերպություններին և այլն, սակայն այս ուսումնասիրությունն առանձնանում է նրանով, որ թեման բովանդակային առումով, մեթոդաբանությամբ ու իրականացման եղանակով՝ եզակի է:

Աշխատանքն ամբողջական է, հագեցված է փորձագիտական նյութերով, հարցաղրումների ու դրանց պարզաբանումների առումով հստակ է, իսկ զետեղված չորս տասնյակի հասնող գծապատկերներում բերված տվյալների մեծ մասն առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ:

Ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից և հավելվածներից: Ներածության մեջ, ինչպես ընդունված է, ատենախոսը ներկայացրել է թեմայի ուսումնասիրության արդի մարտահրավերները, կարևորությունը, հիմնական նպատակն ու խնդիրները. դրանց իրականացման տեսական ու մեթոդաբանական հիմքերը:

Առաջին գլուխն ունի «Սոցիալական փոփոխություններն էթնիկության համատեքստում» վերնագիրը, որը բաժանված է երեք ենթագլուխներից: Այս գլխում հեղինակն անդրադառնում է սոցիալական փոփոխությունների էությանը, դերին, տեսա-մեթոդական առանձնահատկություններին ու դրանց էթնիկական բաղադրիչներին: Քննարկվում է արդի գիտության մեջ ընդունված դասական այն տեսությունները, որոնք այս կամ այն չափով առնչվում են սոցիալական փոփոխությունների ուսումնասիրությանը և կարող են նպաստավոր լինել հասարակության զարգացման բազմաբնույթ պատճառների բացահայտման գործում: Այդ տեսություններն օգնում են հասկանալ սփյուռքի որոշակի էթնիկ խմբում ընթացող սոցիալական փոփոխությունների առանձնահատկություններն ու օրինաչափությունները:

Անդրադառնալով սոցիալական փոխակերպումների խնդրին ատենախոսը նշում է, որ դրանց ուսումնասիրությունը իրականացվում է երեք ուղղություններով՝ քաղաքական, տնտեսական և ժողովրդագրական: Այդ գործընթացները յուրաքանչյուր էթնիկ հանրության մեջ առաջացնում են փոփոխություններ, որոնք հիմնականում պայմանավորված են արտաքին և ներքին ազդակներով: Հեղինակը կարևորում է նոր միջավայրում էթնիկ խմբի հարմարվողականության գործընթացները, որոնց համար երկար ժամանակ է հարկավոր:

Ատենախոսը իրավացիորեն նշում է, որ սոցիալական փոփոխությունները մեծապես պայմանավորված են սոցիալական շարժով, որոնք կապված են միջավայրի, սոցիալական կառուցվածքի, սոցիալ-մշակութային և տնտեսական պայմանների փոփոխությունների հետ: Այնուհետև մանրամասն անդրադառնում է սոցիալական կառուցվածքին և նրա մաս կազմող սոցիալական շարժին ու տեսակներին, տեղաշարժերին, շերտավորմանը, ինչպես նաև սոցիալական խմբերին:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է Հայկական սփյուռքի սոցիալական գործընթացների առանձնահատկություններին: Ատենախոսը անդրադարձել է գիտության մեջ առկա այն մեկնաբանություններին ու տեսակետներին, որոնք վերաբերում են սփյուռքի սահմանմանը, տիպաբանությանը, կարևոր ուղղություններին, առաջացման ու տարածման պատճառներին: Ուսումնասիրության մեթոդներին անդրադառնալիս, Տանաջյանը նշում է, որ

սփյուռքի ուսումնասիրության նախնական փուլում օգտագործվում էր պատմահամեմատական մեթոդը, որն արդի փոփոխվող հասարակությունում սահմանափակ հնարավորություններ է ընձեռում, ուստի անցում կատարվեց պատմա-տիպաբանական մեթոդին: Ատենախոսը ներկայացնում է սփյուռքի ուսումնասիրության տարբեր մոտեցումներ, դրանք բաժանելով երկու խմբի, որոնցից առաջինը հենվում է այն գաղափարի վրա, որ սփյուռքը էթնիկական-սոցիալական երևույթ է, ընդունելով այս տեսակետը, հեղինակը կարծում է, որ անընդունելի է քաղաքական գործոնը՝ նշելով դրա էթնոքաղաքական բնույթը: Նա համարում է, որ Հայկական սփյուռքը ուսումնասիրողների համար կարևոր օբյեկտ է և դասական օրինակ: Կարևոր տեղ է հատկացրել սփյուռքի ներուժի ուսումնասիրությանը՝ մարդկային, տնտեսական, քաղաքական առումներով: Չի շրջանցվել սփյուռքահայերի թվի ու կազմի փոփոխությունները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքները քանակապես և որակապես փոփոխություններ են կրում: Տանաջյանը կարևորում է որոշակի ժամանակահատվածում սփյուռքի տարբեր խմբերի տարաբնակեցման ձևերն ու օրինաչափությունները՝ առանձնացնելով դրանց հավաք և ցրիվ տեսակները: Մեծ նշանակություն է տրվում այլէթնիկ միջավայրում էթնոսի հավաք տեղաբաշխման ձևին, քանի որ այն հնարավորություն է տալիս բնականոն զարգացման համար, իսկ ցրված տեղաբաշխման դեպքում առաջանում է ձուլման վտանգ:

Ատենախոսն առանձին բաժին է հատկացրել հայկական համայնքների էթնոմշակութային միջավայրին և սոցիալական փոփոխություններին, որտեղ հստակ շարադրել է համայնքների գործունեության բնույթը տարբեր միջավայրերում, փոփոխությունների ընթացքը, կենսագործունեության պայմանները և այլն: Ըստ հեղինակի, սփյուռքահայերի էթնոմշակութային և էթնոսոցիալական վարքը հենվում է որոշակի ցուցիչների վրա, առանձնացնելով տարբեր համայնքների լեզվական վարքագիծը, կրթական կողմնորոշումը, սոցիալ-ժողովրդագրական, մասնագիտական կազմը, տեղաշարժերի բնույթը, երկիր-համայնք հարաբերությունները և այլն:

Ըստ ատենախոսի նշված երեք քաղաքների միմյանցից տարբերվող միջավայրում հետաքրքիր պատկեր է ներկայացնում սոցիալական և տարածական շարժերը,

ինտեգրման և էթնոմշակութային գործընթացները: Որպես օրինակ ներկայացրել է նշված քաղաքների հայերի թվի ու կազմի շարժընթացը, աճի գործընթացները, սոցիալ-ժողովրդագրական կազմը, տեղաշարժերի տեսակներն ու բնույթը, դրանց պատճառները, ինչպես նաև ազգային ուսումնական ու կրոնական կազմակերպությունների գործունեության, ներքին ու արտաքին միջավայրի ու դրանց փոփոխությունների մասին համապատասխան տվյալներ: Ինչպես նշում է ատենախոսը, հայերի լեզվական և կրթական դիրքորոշումների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այլէթնիկ միջավայրում ազգային ինքնության պահպանման գործում կարևոր դեր ունի ներընտանեկան խոսակցական լեզուն և կրթության նախընտրությունը, որն ապահովում է ազգային միջավայր, այսինքն ունի ազգապահպան նշանակություն՝ հատկապես լեզվական վարքի ու ինտեգրման առումներով: Նշված երեք համայնքներում կատարված դաշտային հետազոտությունները ցույց տվեցին, որ Թեհրանում և Բեյրութում ընտանիքի հիմնական խոսակցական լեզուն հայերենն է, իսկ Լոս Անջելեսում՝ ինչպես հայերենը՝ այնպես էլ անգլերենը: Լեզվական խնդիրները վեր հանելու նպատակով, ատենախոսը փորձագիտական բազմաթիվ հարցումների միջոցով ներկայացնում է երեք խոշոր համայնքների իրական պատկերը:

Երրորդ գլուխը հիմնականում համեմատական վերլուծություն է Լոս Անջելեսի, Թեհրանի և Բեյրութի հայկական համայնքների սոցիալական շարժի հիմնական միտումների վերաբերյալ: Հեղինակը հայերի սոցիալ-մասնագիտական խմբերը ներկայացնելիս ուշադրության է հրավիրել այն հանգամանքը, որ տարբեր հետազոտողներ, ընդհանուր առմամբ, տարանջատում են աշխատանքային երկու հիմնական խումբ՝ մտավոր և ֆիզիկական աշխատանքով զբաղվողներ:

Լոս Անջելեսի, Թեհրանի և Բեյրութի համայնքների բնակչության սոցիալ-մասնագիտական կազմի մասին պատկերացումներ կազմելու համար անց են կացվել փորձագիտական և խորին հարցազրույցներ, որը համալրելու է ստացված քանակական տվյալները: Վերջին 20 տարիներին Լոս Անջելեսում փոխվել է հայերի մասնագիտությունների ոլորտը, եթե նախկինում հարգի էր ոսկերչությունը, շինարարությունը, ավտոնորոգումը, կոշկակարությունը, ապա այժմ՝ բժշկությունը, փաստաբանությունը և այլն: Այս համայնքում մտավոր աշխատանքով զբաղվածները

մեծ թիվ են կազմում: Հայաստանից գաղթած հայերը հիմնականում բանվորություն են անում: Ըստ Տանաջյանի, հետազոտությունները ցույց են տալիս, որ ԱՄՆ-ից հայերի արտագաղթ չի սպասվում, հնարավոր է միայն ներքին տեղաշարժեր: Ի տարբերություն Լոս Անջելեսի, Թեհրանում հայերը հիմնականում զբաղված են ֆիզիկական աշխատանքով, նրանք լավ արհեստավորների համբավ ունեն: Բեյրութում հայերը հիմնականում զբաղված են արհեստներով, սակայն վերջին տարիներին, կապված ճգնաժամի հետ, ակտիվացել են ներքին տեղաշարժերը, սիրիահայերի ներգաղթը զգալի փոփոխությունների է հանգեցրել, այժմ նոր սերունդը հակված է ուսմանը: Հետազոտվող երեք համայնքների սոցիալ-մասնագիտական խմբերի համեմատությունը ցույց է տալիս, որ Լոս Անջելեսի և Բեյրութի հայ համայնքները հիմնականում հակված են մտավոր աշխատանքի, իսկ Թեհրանինը՝ ֆիզիկական: Անդրադառնալով միջսերնդային և ներսերնդային սոցիալական շարժի առանձնահատկություններին, հեղինակը քննարկել է երեք քաղաքներ ելքի երկրներից մուտք գործած հայերի սոցիա-մասնագիտական կազմի փոփոխությունները՝ մտավոր և ֆիզիկական աշխատանքով զբաղվածների հարաբերակցության համատեքստում:

Եզրակացության մեջ ատենախոսը ներկայացնում է աշխատանքի հիմնական դրույթները, դրանցից բխող եզրահանգումները, իսկ հավելվածում ներկայացրած երեք տասնյակի հասնող գծապատկերները և զրականության հարուստ ցանկը հնարավորություն են տալիս ընդհանուր պատկերացում կազմելու սփյուռքի նշված քաղաքների հայ համայնքների սոցիալական փոփոխությունների մասին:

Լուսինե Տանաջյանի ատենախոսական աշխատանքը շատ արդիական է և ունի տեսական ու գործնական կարևոր նշանակություն. այն բովանդակային առումով առաջիններից մեկն է և պետք է ասել, որ ատենախոսի համառ ջանքերի, մասնագիտական համապատասխան դրակների ու աշխատասիրության շնորհիվ, նրան միանգամայն հաջողվել է լուծել իր առջև դրված դժվարին խնդիրները:

Այժմ կցանականայի զրախոսվող աշխատանքի վերաբերյալ ներկայացնել մի քանի նկատառումներ:

- Աշխատանքում առկա են լեզվա-ոճական բնույթի թերացումներ,
- Շատ են օտարահունչ բառերը, բառեզրերն ու բառակապակցությունները,

- Ատենախոսության մեջ նույն բառերի մի քանի տարբերակներ են օգտագործված՝ անհրաժեշտ է որոշակիություն:

Իհարկե վերը թվարկված նկատառումներն ամենևին չեն կարող ազդել այն հսկայական ու քրտնաջան աշխատանքի վրա, որ կատարել է ատենախոսը: Հետևաբար, Լուսինե Տանաջյանի «Սոցիալական փոփոխությունները հայկական սփյուռքում (Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայերի էթնոսոցիոլոգիական հետազոտություն) թեկնածուական ատենախոսությունը լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջները, ուստի միջնորդում ենք մասնագիտական խորհրդին Լուսինե Ասատուրի Տանաջյանին շնորհել Է.00.04. «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու Համլետ Սարգսյան

Պատմ. գիտ. թեկնածու Համլետ Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ.
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն,
պատմ. գիտ. թեկնածու Արսեն Բորոխյան
25.02.2020թ.